



## Բ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ



### ԺԱՄԱՄՈՒՏ

Կ'աղաչենք քեզի սուրբ կոյս Մարիա՛մ Աստուածածին, որ Բարձրեալին հզօր հովանաւորութիւնը վայելեցիր եւ սուրբ Զոգւոյն գալուստով լուսաւորուեցար, որ անբացատրելի կերպով յղացար եւ ծնունդ տուիր բոլոր Եակներու արարչին, բարեխօսէ՛ անոր մօտ՝ որ մարմնացաւ քեզմէ, որպէսզի մեր հոգիները փրկէ՛:

### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԲՉ

Օրհնութիւն մատուցանենք յաւերժի Թագաւորին, որ մարմնացաւ Կոյսէն, աշխարհս հաստատեց անսասան հաւատքով, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

Բանն Աստուած որ կամովին համբերեց խաչի մահուան եւ իր սուրբ արիւնը թափեց տիեզերքի փրկութեան համար, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

Աստուածօրէն յարութիւն առաւ Լորափոր վեմէն, լուսաւորեց իր սուրբ Եկեղեցին ի փառս եւ ի գովեստ իր անուան, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

## ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 28 )

Տիրոջը ձայնը ջուրերուն վրայ, եւ Աստուած իր փառքովը կ'որոտայ եւ Տէրն ինքը բազմառատ ջուրերու վրայ:

Տիրոջը մատուցեք Աստուծոյ որդիներ, Տիրոջ մատուցեք խոյերու որդիները:

## ԸՆԹԵՐՅՈՒԱԾ

### Առաքեալներու գործերն

(19, 1-7)

Մինչ Ապողոս Կորնթոս էր, Պօղոս՝ լեռնաշխարհի կողմէն իջաւ Եփեսոս: Գտաւ այնտեղ քանի մը աշակերտ ու հարցուց անոնց. «Սուրբ հոգին ընդունեցա՞ք, երբ հաւատացիք»: Անոնք պատասխանեցին. «Եւ ո՛չ իսկ լսած ենք, որ Սուրբ Հոգի մը կայ»: «Իսկ ի՞նչ մկրտութեամբ մկրտուեցաք», ըսաւ Պօղոս: «Յովհաննէսի մկրտութեամբ»: պատասխանեցին անոնք: Այն ատեն Պօղոս ըսաւ. «Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւնը քարոզեց ժողովուրդին, յանձնարարելով հաւատալ անոր, որ իրմէ ետք կու գայ, այսինքն՝ Յիսուս Քրիստոսի»: Ասոր վրայ, անոնք մկրտուե-



ցան յանուն Տեառն Յիսուսի. իսկ երբ Պօղոս ձեռքը դրաւ անոնց վրայ, Հոգին Սուրբ եկաւ անոնց վրայ ու սկսան լեզուներ խօսիլ ու մարգարէանալ: Եւ ասոնք բոլորը տասներկու հոգի էին:

### Ալէլուիա, Ալէլուիա,

Յովհաննէս Կարապետը, զարհուրած, որովայն որովայն կ'երկրպագէր, Աստուծոյ Խօսքին սպասաւորը դառնալով եւ լսելով ահաւոր ձայնը՝ կ'աղաղակէր ըսելով. Ահա՛ Աստուծոյ Գառնուկը որ աշխարհի մեղքերը իր վրան կ'առնէ:

### Ալէլուիա:

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆԸ ՅՈՎհԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ

(Մատթ 3, 1-17)

Այն օրերուն, Հրէաստանի անապատին մէջ յայտնուեցաւ Յովհաննէս Մկրտիչ, որ կը քարոզէր ու կը յայտարարէր. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ մօտեցած է երկինքի Արքայութիւնը»: Ասոր մասին է, ինչ որ ըսուած է Եսայի մարգարէին բերնով. «Անապատին մէջ ձայն մը կը հնչէ. պատրաստեցէք Տիրոջ ճամբան, հարթեցէ՛ք անոր շաւիղները»: Յովհաննէս հագած էր հագուստ մը, շինուած ուղտի մաւերէ ու մէջքին կապած էր կաշիէ գօտի մը: կը սնանէր մարախներով ու վայրի մեղրով: Երուսաղէմէն, Հրէաստանէն, Յորդանանի շրջակայքէն մարդիկ կու գային իրեն, կը մկրտուէին իրմէ Յորդանան գետին մէջ ու կը խոստովանէին իրենց մեղքերը:

Տեսնելով բազմաթիւ փարիսեցիներ ու սադուկեցիներ, որոնք կու գային մկրտուելու, ըսաւ անոնց. «Իժերո՛ւ ծնունդ. ո՞վ թելադրեց ձեզի խուսափիլ վերահաս բարկութենէն: Այսուհետեւ ապաշխարութեան արժանի պտուղ տուէք ու մի՛ գոհանաք դուք ձեզի ըսել՝ ‘Աբրահամ մեր հայրն է’: Կ’ըսեմ ձեզի, Աստուած կարող է այս քարերէն իսկ Աբրահամի որդիներ յարուցանել: Տապարը արդէն իսկ մխուած է ծառերու արմատներուն մէջ եւ ամէն ծառ, որ ընտիր պտուղ չի տար՝ պիտի կտրուի ու կրակը նետուի: Ես ձեզ կը մկրտեմ ջուրով, որպէս զի ապաշխարէք. իսկ իմ ետեւէս եկողը, որուն կօշիկները քակելու արժանի չեմ, ինձմէ աւելի հզօր է՝ ու ձեզ պիտի մկրտէ Սուրբ Հոգիով ու կրակով: Հոսելին ձեռքն առած՝ պիտի մաքրէ իր կալը. ցորենը պիտի ամբարէ



շտեմարանին մէջ, իսկ յարդը՝ պիտի այրէ անշէջ կրակով»:

Այն օրերուն Յիսուս Գալիլիայէն Յորդանան եկաւ Յովհաննէսի մօտ, անկէ մկրտուելու համար: Յովհաննէս ուկեց արգիլել իրեն ու ըսաւ. «Դո՛ւն ինձի կու գաս, մի՞նչ ես պէտք է քեզմէ մկրտուիմ»: «Թոյլ տուր, յարմար է, որ այսպէս կատարենք ամէն արդարութիւն», պատասխանեց Յիսուս: Այն ատեն Յովհաննէս թոյլ տուաւ: Յիսուս մկրտուեցաւ ու ջուրէն դուրս ելաւ: Եւ ահա երկինքը բացուեցաւ ու տեսաւ, որ Աստուծոյ Հոգին աղաւնիի կերպարանքով կ’իջնէր ու կու գար անոր վրայ: Երկինքէն եկող ձայն մը

կ’ըսէր. «Ասիկա՛ է իմ սիրելի Որդիս, զոր ես հաճեցայ ընտրել»:

### ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

«Դա է որդի իմ սիրելի, ընդ որում հաճեցայ» (Մատթ. 3,17)

Մեր մարմնացեալ Փրկիչը՝ Էմմանուէլ, իր կեանքին ու առաքելութեան ընթացքին երեք գանազան կերպերով ինքզինք յայտնեց: Նախ մոգերուն,

որոնք եկան ու երկրպագեցին անոր: Երկրորդ յայտնութիւնը, զոր այսօր կը վերապրինք Մատթոս աւետարանիչի խօսքերով, տեղի ունեցաւ երբ Զրիս-

տոս Յորդանան գետին մէջ մկրտուեցաւ Յովհաննու Կարապետի ձեռքով: Մկրտութեան պահուն՝ Աստուած իր Միածին Որդին կը յայտնէ ըսելով. «Դա է որդի իմ սիրելի, ընդ որում հաճեցայ»: Իսկ երրորդ յայտնութիւնը, զոր մի քանի օր ետք պիտի ապրինք, տեղի կ'ունենայ Գալիլիոյ Կանա քաղաքին մէջ, ուր Զրիստոս առաջին անգամ հրապարակաւ հրաշք կը գործէ իր աշակերտներուն առջեւ: Արդարեւ, Յայտնութեան տօնը կամ ծիսական շրջանը զոր այս օրերուն կ'ապրինք՝ յիշեալ երեք խորհուրդներուն յիշատակը կը բովանդակէ, առանց մոռնալու սակայն Զրիստոսի առաջին յայտնութիւնը՝ իրՄնուկը:

Այսօրուայ աւետարանին մէջ կերդրուական կերպով մեզի ի յայտ կու գայ Յովհաննու Կարապետին պատկերը: Յովհաննու Կարապետը՝ Յիսուսէն վերջ, հարկաւ, «Աստուծոյ Թագաւորութեան» մեծագոյն քարոզիչը կը հանդիսանայ: Ան կը նոյնանայ Եսայի մարգարէի կողմէ նախատեսուած «Անապատի մէջ բարձրացող ձայն»ին հետ, որ կ'ըսէ. «Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարեք զճանապարհ Տեառն, եւ ուղիղ արարեք զշաւիղս նորա:» (Մարկ 1, 3):

Յովհաննէսի քարոզութիւնը իր հոգիին եւ կեանքին՝ կերակուրին ու զգեստին պէս անպաճոյճ ու ժուժկալ է: Կարելի է երկու բառերու մէջ խտացրնել՝ Ապաշխարանք եւ Արդարութիւն: «Ապաշխարեցեք, որովհետեւ մօտեցած է երկնքի արքայութիւնը» (Մատթ. 3,2): «Ապաշխարանքի պտուղներ տուեք... Տապարը արդէն իսկ միսուած է ծառերու արմատներուն մէջ, եւ ամեն ծառ, որ բարի պտուղի տար, պիտի կտրուի եւ կրակ նետուի» (Մատթ. 3, 7-9):

Այլուր ըսած էր. «Ով որ երկու հանդերձ ունի, մէկը՝ չունեցողին թող տայ: Նոյնը նաեւ կերակուրին: Պետական



պաշտօնեաներ իրենց թոշակով թող գոհանան. ժողովուրդէն աւելի չպահանջեն, անիրաւութիւն չընեն, չզըրպարտեն ոչ ոք» (Ղուկաս 3, 10-14):

Մեր Փրկիչը՝ Յիսուս մեծ համարում ուներ Յովհաննէսի հանդէպ եւ առիթով մը զինք որակեց որպէս մեծագոյն անձնաւորութիւնը բոլոր ծնածներուն մէջ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի կիներէ ծնածներուն մէջ Յովհաննէս Մկրտիչէն աւելի մեծ մէկը չէ ելած, բայց երկնքի արքայութեան մէջ փոքրիկը անկէ մեծ է»:

Մեր հայոց եկեղեցւոյ մէջ՝ Կոյս Մարիամէն ետք մեծագոյն սուրբը կը նկատուի Յովհաննէս. չորս անգամ տօնախմբութիւն սահմանուած է անոր: Իրեն ի պատիւ զանազան շարականներ ու տաղեր յօրինուած են, սրտառուչ են սակայն Զրօրինքի տաղերը:

Թող Տիրոջ անունը փառաւորուի յաւիտեանս յաւիտենից իր սուրբերուն մէջ, եւ իր շնորհքը բաժնէ ուրիշ կարապետներու, որոնք օրինակ հանդիսանան ապաշխարիութեան եւ մանաւանդ ընկերային արդարութեան: Ամէն:

Զրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ.  
Ձեզի մեզի մեծ աւետիս: